



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՄԻՆԻՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆ

ԶՄԻՌՆԻԱ ԵՒ ՄԻՆԻՏՐԱԿԱՆ

ԹԻՒ 1063

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սկզբնական դաշնագիրն (բրթօքոլ) արդէն ստորագրեցաւ ի մեծ տէրութեանց Եւրոպայի, որով Կ. Պօլսոյ դեսպանաժողովոյն որոշմունքն վաւերական կերպարան մի ստացան: Այս դաշնագրով կատարեալ համաձայնութիւն մի գոյացաւ Փարիզի 1856ին դաշնագրութեան ստորագրող տէրութեանց մէջ ի մասին արեւելեան գործոց: Թէեւ տակաւին յայտնի չէ սկզբնական դաշնագրոյն բոլոր պարունակութիւնն, բայց տարակոյտ չկայ որ նորա նպատակն է պատուաւոր միջոց մի պատրաստել Ռուսիոյ՝ որ կարող լինի ցրուել զգորաբանակ իւր, որով թուրքիոյ կառավարութիւնն ևս պիտի փութայ խաղաղութեան վիճակի մէջ դնել զպաշտպանողական ջորախումբ իւր:

Գալով գործադրութեան վարչական նոր բաժնեկարգութեանց՝ որոշելոց ի դեսպանաժողովոյն Կ. Պօլսոյ վասն բարեփոխման վիճակի թուրքաբանակ քրիստոնէից, Բարձրագոյն Դուռնին քննադատեալ կամօք յանձնառու կրկին հետգնեալ է ի գործ դնել զնոյն բարեկարգութիւնսն, ի բաց առեալ զայնոսիկ՝ որ քննա կրեւերն իւր վեհապետական անկախութեան և իւր երկրին ամբողջութեանն, որք՝ ինչպէս յայտնեւ է, փարիզի դաշնագրութեամբ ապահովեալ են:

Այս օրինակ լինելով քաղաքային իրաց այժմեան վիճակն, Եւրոպան՝ ըստ ամենայն երեւմանց պիտի պարտաւորի համբերել ժամանակ մի առ ի տեսանել զգործադրութիւնն վարչական նոր բարեկարգութեանց: Եւրոպայի հիմնաւորքն այսինքն երեսփոխանական ժողովն և Եւրոպայոսն՝ արդէն հաստատեցան:

Կ. Պօլսոյ դեսպանաժողովոյն գումարումէն ի վեր, կըսէ ժողովաւ Սէն-Քէթեօր-Կոլ պաշտօնական օրագիրն, Ռուսիոյ զօրաբանակն պատրաստ կըմնայ՝ որպէսզի ի պահանջել հարկին՝ նպատաւատոյց լինի գործադրութեան որոշմանցն՝ միաբանութեամբ եղելոց ի մեծ տէրութեանց: Ստորոգ է սակայն թէ Ռուսիան կաշխատի միշտ որ նոյն հարկն տեղի չունենայ:

Սկզբնական դաշնագրոյն նպատակն է համաձայնել ի վերայ եղանակին և հնարին, որք կրնան հարկաւոր լինել առ ի պարտաւորել ըզբարձրագոյն Դուռնին ի գործադրութիւնն որոշմանց Դեսպանաժողովոյն: Զօրաբանակին ցրումն յայնժամ կարելի կըլինի, յորժամ իմացուի թէ սկզբնական դաշնագիրն ինչ ազդեցութիւն ըրած է ի վերայ Բարձրագոյն Դրան. և այս ազդեցութիւնն աւելի զօրաւոր պիտի լինի երբ օսմանեան կառավարութիւնն գիտէ թէ զինուորութեամբ պիտի պաշտպանուին վերոյիշեալ պարտաւորիչ եղանակն և հնարքն:

Ինչպէս կըտեսնուի, տակաւին ծանր դժուարութիւնք և սե կէտեր կերելին հորիզոնին վերայ, որք կարգելուն զցրումն զօրաբանակաց թէ ի կողմանէ Ռուսիոյ և թէ ի կողմանէ թուրքիոյ: Այսու ամենայնիւ եւրոպական դիւանագիտութիւնն՝ ըստ մեզ, պիտի յաջողի դիւրացնել զյիշեալ ծանր դժուարութիւնսն:

Ի Կ. Պօլսոյ հասեալ վերջին լուրքն կըմանուցանեն թէ օսմանեան կայսերական կառավարութիւնն բացառական պատասխան տուեր է մեծ տէրութեանց գործակալաց ի մասին ընդունելութեան սկզբնական դաշնագրոյն՝ զոր առաջարկեալ էին նմա: Բայց յայտնանէ կըհաւաստեն թէ արտաքին գործոց տեսուչ Օսմանէթ փաշան հեռագրով իմաց տուած է օսմանեան դեսպանաց ի Լոնտոն, ի Փարիզ և ի Վէննա, թէ

կայսերական գիւհան չկրնար իւր հաւանութիւնն տալ սկզբնական դաշնագրոյն, և հետեւեալ կըմերժէ զառաջարկութիւնն զինաթափ լինելոյ:

Կ. Պօլսոյ գործակաւարք մեծ տէրութեանց՝ կըյորդորեն զբարձրագոյն Դուռն արտաքին կարգի դեսպան մի յուղարկել ի Բէդէրսպուրկ ի բանակցութիւն՝ նախքան որոշում մի տրուիլն ի մասին Դաւաթաղի խնդրոյն: Սակայն կայսերական գիւհան դեռ վերջնական պատասխան մի չտուաւ այս բարեկամական յորդորին:

Մեծին Ռիտանիոյ դեսպան սըր Հէնրի Իլիքթ իւր անձնական տկարութեանը պատճառաւ՝ որոշած լինելով չվերադառնալ ի Կ. Պօլսոյ, նորա տեղին միստր Լէյքերտ որ ժամանակաւ արտաքին գործոց նախարարութեան երկրորդ տեսչի պաշտօնն վարած է, Անգղիոյ դեսպան անուանեցաւ և ի մօտ առուրս կըսպասուի ի Կ. Պօլսոյ:

Միստր Լէյքերտ՝ նշանաւոր հանդիսացեալ է Թուրքիոյ համար ունեցած իւր համակրական եռանդուն զգացմամբն և զանազան նպատաւատոյց ատենախօսութեամբք իւրովք:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԱՋԱՆՕՍՈՒԹԻՒՆ

Ընթերցեալ Օսմանեան երեսփոխանական ժողովոյն առաջին բացման առթիւ:

(Շարունակութիւն Եւ վերջ:)(1)

Ի վերջոյ, խել մը գրգռութեանց ու հրապուրանաց արդիւնք եղող Հէրսէքի անցքը վրայ գալով, հետզհետէ մեծցաւ ու կարեւորութիւն առաւ, և յանկարծ Սերվիոյ ու Գարատաղի պատերազմները բացուելով, քաղաքական աշխարհին մէջ ալ մեծ մեծ շփոթութիւններ տեսնուեցան: Պետութիւնն այսպիսի ծանր վիճակի մէջ գտնուած ժամանակ, Աստուածային կամօք ու տնօրէնութեամբ՝ մեր նախնեաց մեծաց գահը ելանք: Մեր ընդհանուր վիճակը երբէք այսպիսի ծանր ու վտանգաւոր կերպարանք մը առած և նմանը տեսնուած չըլլալով՝ հարկադրեցայ, նախ քան զամենայն, մեր բանակները այլեւայլ կողմերը շարժուել և 700,000 չափ զօրք զինուց տակ առնուել, ի պաշտպանութիւն մեր իրաւանց: Պարտ համարեցայ ինձ, այս շփոթութեանց՝ օգնութեամբն Աստուծոյ իսպառ վերջ տալու նպատակաւ, մեր Պետութեան համար էական բարեկարգութեան հնարք մը որոնել, և նովաւ մեր ապագայն մըլտնջնաւոր ապահովութեան ենթարկել: Բայտանի է, թէ ի յերկնուստ մեր երկրին շնորհեալ աջակցութեան, և մեր ժողովրդեան ունեցած ընդունակութեան համաձայն՝ եթէ բարեփոխ վարչութեան ընթացք մը որոշուի, քիչ ժամանակի մէջ շատ յառաջ պիտի երթանք: Մեր քաղաքակիրթ աշխարհին ներկայ յառաջագիւտութեան չհասնելուն պատճառն՝ երկրին կարօտ եղած բարեկարգութեան, և անոնց վերաբերեալ օրինաց ու կանոնաց չարեւանակուիլն է. և այս ալ՝ յօրինուած բաներն միապետական իշխանութեան (հիւքիւմէթը իսթիպատիէ) ձեռքէն ելած, և խորհրդակցութեան հիմանց վրայ հաստատուած չըլլալէն յառաջ գալն՝ ապացուցեալ է: Ծանուցեալ է, թէ քաղաքակիրթ պետութեանց յառաջագիւտութիւնը, նոցա աշխարհաց ապահովութիւնն ու բարգաւաճումն՝ հասարակաց խորհրդածութեամբն ու միաբանութեամբն հաստատեալ կարգաց ու օրինաց արդասիւքն են:

Հետեւեալ, կարեւոր համարեցայ՝ մեր յառաջագիւտութեան միջոցներն ալ այն ընթացքով որոնել, և երկրին օրէնքները հասարակաց խոր-

(1) Տես լրագրոյս նախընթաց քիւր:

հրդարութեան վրայ հիմնել: Այս պատճառաւ հասարակացի հիմնական օրէնքը: Այս օրէնքը հաստատելուն նպատակը՝ ժողովուրդը հանրական խնդրոց կարգադրութեան միայն ներկայ գտնուիլ հրաւիրել չէ, այլ համալմամբ թէ, այս ընթացքը՝ երկրին վարչական բարեկարգութեան, չարաչար գործածութեանց և միապետական վարմանց բարձման էական միջոց մը պիտի ըլլայ: Հիմնական օրէնքը՝ միանգամայն անհատներու մէջ միութիւն ու եղբայրութիւն հաստատելու, և ժողովուրդն ի բարօրութիւն առաջնորդելու նպատակն ունի: Մեր բարձրաշուք նախնիք իրենց յաջողած յաղթութեամբքն այս ընդարձակ երկրին մէջ բաղմամբիւ ցեղեր իրենց իշխանութեան ներքեւ ժողովեցին. բայց կրօնքով ու ազգութեամբ այս աստիճան խառն եղող սոյն ցեղերը մէկ օրինաց և միեւնոյն զգացման յօդեւու գործը մնացած էր: Արդ՝ քանզի ամենակարողին Աստուծոյ օգնութեամբն այս գործն ալ յաջողած է, այսուհետեւ մեր բոլոր հպատակները մէկ հայրենեաց զաւակ ըլլալով, և ամենքն ալ միեւնոյն օրինաց հովանաւորութեան ներքեւ ապրելով, 600 այսչափ տարիէ ի վեր մեր կայսերական ազգատոհմին տիրութեան եղող և պատմութեան էջերուն մէջ այնչափ վառօք ու պատուով արձանագրեալ անուամբն պիտի յորջորջուին: Կըյուսամ թէ, մինչև ցարդ իւր զօրութեամբն ու մեծութեամբը աշխարհածանօթ եղող Օսմանցի անունն՝ այսուհետեւ մեր բոլոր հպատակաց մէջ գոյանալիք նշանակեալ օգնականներն շարունակութեան ու պահպանութեան պիտի նպաստէ: Ահա, այս պատճառներով ու նպատակներով, իմ ընտրած ճանապարհէս ընթանալ, և զայն օր յօրէ ամրացնել ու զօրացունել՝ հաստատապէս որոշած եմ: Ձեր գործնական և մտաւորական օժանդակութեան կապասեմ, արդարութեան և ազատութեան վրայ կառուցեալ հիմնական օրինաց օրինաւոր սրամագրութիւններէն օգուտ քաղելու համար:

Կարեւոր համարեցայ՝ հպատակաց հաւասարութեան ու ազատութեան իրաւունքներն ապահովել, միապետական իշխանութիւնը չափաւորել, և պետութեան ու երկրին օրէնքներն ու խնդիրները հասարակաց խորհրդով հաստատել ու գործադրել, և վերջապէս մեր վարչութեան հիմունքն խորհրդակցութեան և սահմանի վրայ զետեղել, և այս մասին յատկապէս ունեցած անկեղծ փափաքանացս համաձայն՝ ծերակուտէ և երեսփոխաններէ բաղկացեալ ձեր ընդհանուր ժողովը կազմել: Արդ՝ ձեզ պարտ է, ձեզ յանձնուած կանոնական պարտաւորութիւնները կատարել հաւատարմաբար և ուղղութեամբ և առանց մէկէ մը ակնածելու, և պետութեան ու երկրին փրկութենէն ու բարօրութենէն ուրիշ բան չմտածել: Այսօր մեր կարօտ եղած բարեկարգութիւնը, և մեր երկրին համար ամեն կողմանէ ակնկալեալ կարգադրութիւնը՝ խիստ կարեւոր են. ասոնց հետզհետէ գործադրութիւնը՝ ձեր խորհրդակցութեանն ու քուէարկութեանն կախումն ունի: Ծուրայի՝ Տէվրէթ մէկ կողմանէ կըմագրէ պէտք եղած օրինաց ծրագրերը: Ձեր այս տարուան բացման շրջանին մէջ, ձեր ժողովոյն ներքին կանոնադրութիւնը, ընտրական կանոնադրութիւնը, և վիճակներու ու նահիյէներու, պէլէտիյէի, դատաւորութեան ու դատաւարութեան, և դատաւորաց յառաջացման ու պաշտօնէ հանգստեան, և բոլոր պաշտօնակալաց պարտաւորութեանց ու պաշտօնէ հանգստեան կանոնադրութիւնները, և լրագրական, և հաշուական ատենանիս կանոնները, ինչպէս նաև

նախորդ տարուան հաշուէկշտին (պիւտոնէ) կա-
նանական ծրագրերը ձեր ժողովին պիտի յանձ-
նուին 'ի խորհրդակցութիւն : Կուգեմ, որ այս
կանոնները կարգաւ նկատողութեան առնուք
և խորհիք ու որոշէք : Մասնաւորապէս՝ հասա-
րակաց իրաւանց ապահովութեան միջոց եղող
դատարաններու և ոստիկանութեան գորաց ան-
յապաղ բարեկարգութիւնն կարեւոր է, և դա-
սոնք արդիւնաւորեալ համար արդէն սահման-
եալ գումարին աւելնալուն պէտք կայ :

Այսու ամենայնիւ, ինչպէս ձեր ժողովոյն
տրուած հաշուէկշտէն ալ պիտի իմանաք՝ մեր
դանձալին վարչութիւնը խիստ առաւելագոյն
ութեանց ենթարկուած ըլլալով, կը յանձնա-
րարեմ, որ ամեն բանէ յառաջ՝ միաբանութիւն
հոգ տանիք՝ այս գումարութիւններէն ազատիլ,
մեր դանձալին վարկին վերահաստատութեան
զօրաւոր միջոցներ սահմանել, և միանգամայն
ստիպողական բարեկարգութեանց ու գործա-
դրութեան համար պէտք եղած գումարները
որոշել և յատկացունել :

Աստուծոյ յաջորդ շրջանին բացման մէջ ժո-
ղովոյդ պիտի տրուին վարժարանաց բարեկար-
գութեան և ուսման աստիճաններուն վերաբեր-
եալ օրինական ծրագրեր : որովհետեւ՝ երկրին
ու հպատակաց բարեկարգութեանց ու կարօ-
տութեանց ամենէն մեծն եղող երկրագործու-
թեան ու արուեստից յառաջագիւծութիւնը, և
լուսաւորութեան ու հարստութեան կատարեալ
վիճակի մը վերածուիլը՝ միայն դիտութեանց ու
ուսմանց զօրութեամբ կարելի է ըլլալ : Թէ՛ վե-
րոյշեալ կանոնաց և թէ՛ այսուհետեւ 'ի գործ
դրուելիք կանոնաց տրամադրութեանց անթե-
րի գործադրութիւնը՝ վարչական պաշտօնակա-
լաց ընտրութեան գործին ըստ ամենայնի կա-
րեւորութիւն տալէն կախումն ունի : ուստի
պետական մարմինը՝ այս կէտին, և ուղղութեան
ու հաւատարմութեան բարեմասնութիւն ունե-
ցող պաշտօնակալաց համար Հիմնական օրինաց
տրամադրած վարձատրութեան և պաշտպանու-
թեան մասին մասնաւորապէս ուշադրութիւն
պիտի ընէ : Մեր գահակալութեան հետէ պաշ-
տօնակալաց ընտրութեան գործին կարեւորու-
թիւնն ալ նկատելով՝ ծախքը մեր անձնական
դանձէն վճարուելու պայմանաւ, յատուկ վար-
ժարան մը հաստատել և ընդհանուր վարչու-
թեան համար պաշտօնակալներ հասցնել որոշե-
ցի : Ինչպէս յայտնի է կանխաւ հրատարակեալ
Հիմնական կանոնադրութեան, այս վարժարա-
նին աշակերտները՝ վարչական և քաղաքական
պաշտօններու մինչև ամենաբարձր աստիճաննե-
րը պիտի բարձրանան, և ասոնք՝ առանց խռո-
րութեան կրօնի՝ ամեն կարգէ պիտի անուան-
ուին, և յառաջացումն իրենց յաջորդութեան
աստիճանին համաձայն պիտի ըլլայ :

Երկու տարիէ մտ ժամանակէ հետէ, մեր
ներքին գրադմանց մէջ, և մասնաւոր Սերվիոյ
ու Գարատաղի հետ բացուած պատերազմին
ժամանակ, բոլոր հաւատարիմ հպատակաց կող-
մանէ տեսնուած համակրութեան ցոյցերն, և
զօրաց ամեն տեսակ տառապանաց տանելով ը-
րած ջանքն ու անձնութիւնը՝ տարապայ-
ման գոհութիւն պատճառած է մեզ : Այս խնդ-
րոց մէջ, անտարակոյս մեր իրաւանց պաշտպա-
նութեան համար եղած ձեռնարկութեանց հե-
տեանքն ըլլալով՝ Սերվիոյ իշխանութեան հետ
հաշտութիւն եղաւ : Գարատաղի հետ տեղի ու-
նեցած բանակցութեան վրայ ձեռք առնուելիք
գործողութիւնը՝ ժողովոյդ առաջին նստին պի-
տի ներկայանայ : Կը յանձնարարեմ որ որոշումը
փութացունէք : Բարեկամ տէրութեանց հետ
բարեկամական ու յարգական յարաբերութեանց
մէջ գտնուիլ՝ մեր պետութեան համար ամենէն
կարեւոր սովորական գործն ըլլալով, ցարգ այս
ընթացքը կը յարգենք :

Ասկէց քանի մը ամիս յառաջ, Անդղիոյ կա-
ռավարութիւնը ուղեց ներկայ խնդրոց համար
մայրաքաղաքիս մէջ գեապանաթողովոյ մը գու-
մարումը : Միւս մեծ տէրութեանց կողմանէ ալ՝
առաջարկեալ հիմնական կէտերուն հաւանու-
թիւն տրուելուն պատճառաւ՝ Բ. Գրան կողմանէ
հաճութիւն տրուեցաւ գեապանաթողովոյ գու-

մարման : Թէև այս գումարման մէջ վերջնական
համաձայնութիւն մը չկրցաւ գոյանալ, բայց
դաշնադրութեանց տրամադրութեանց, հա-
մադգային իրաւանց օրինաց, և մեր վիճակին ու
իրաւանց համաձայն եղող պետութեանց փա-
փաքներուն ու խրատուց գործադրութեան հա-
մար անկեղծ ուղղութիւն մ'ունենալնիս յայտ-
նեցինք ու աղացուցինք :

Ահա համաձայնութեան պատճառներուն դա-
ւով՝ չէ թէ հիմնական կէտերու, այլ գործա-
դրութեան եղանակին վրայ եղած է : Բարե-
կարգութեան (թանգիմաթ) սկզբնաւորութենէն
մինչև ցայժմ՝ երկրին ընդհանուր գործոց, և
պետութեան իւրաքանչիւր ճիւղերուն մէջ տե-
ղի ունեցած մեծ յառաջագիւծութիւնը առա-
ւել կատարելագործելու պէտքը դրացած եմք,
և այսօր մեր բոլոր ջանքը՝ նոյն նպատակին հաս-
նելու համար է : Բայց պարտ համարեցայ ինձ՝
այս խնդրոց մէջ երկրին պատիւն ու անկախու-
թիւնը խանգարող որեւէ գործէ զրուշանալ, և
ժամանակին թողուցի՝ ապացուցանել առաջի
ամենեցուն, իմ դիտաւորութեանս անկեղծու-
թիւնն ու ուղղութիւնը :

Արդ՝ միշտ մեր նպատակն ըլլալով մեր իրա-
ւանց ու անկախութեան պահպանութեան ըն-
թացից մէջ յարատեւել, մեր ապագայ ընթացքն
ալ միեւնոյն նպատակին պիտի ձկտի :

Կը յուսամք, որ թէ՛ գեապանաթողովոյ գու-
մարմանէն յառաջ և թէ՛ յետոյ, մեր տէրու-
թեան ցուցած չափաւորութիւնն ու բարեմտու-
թիւնը առաւել պիտի ամրապնդեն՝ և երպայան
կառավարութեանց հետ մեր կառավարութիւնը
կապող բարեկամական յարաբերութիւնն ու
բարեւոք կենակցութիւնը :

Աստուած յաջողութիւն պարգեւէ մեր ամե-
նու ջանիցն :

ԱՁԳԱՅԻՆ

Հաճութեամբ սրտի հրատարակեմք զհետե-
ւալ յօդուածն, որոյ խմատն գրեթէ մեր ներ-
քին համովման յայտարարութիւնն է :

Իզմիր, 28 Մարտ 1877

Յարգոյ խմբագիր,

Խնդրեմ տեղի մը շնորհել հետեւեալ քանի
մը խօսքերուս՝ որ ջերմ զգացման մի յայտա-
րարներն են :

Քաղաքիս Առաջնորդ հոգեւոյս Պօղոս Պատ-
րիարքի վախճանէն ի վեր՝ տեղւոյս ազգայինք
կաթողիկէ կըցանկային նորա արժանաւոր յա-
ջորդն ունենալ : Օրհնեալ ըլլայ Նախախնամու-
թիւնը, կատարեց անոնց փափաքը, և պարգեւեց
այժմու արժանընտիր Առաջնորդ գերապատիւ
տէր Մեքեմեդեկ Մուրատեանց ծայրագոյն
բարեշնորհ վարդապետը, որու անձնական ար-
ժանեաց արդէն քաջածանօթ ըլլալով Հայ հա-
սարակութիւնը՝ լի համակրական զգացմամբ կը
պատուասիրէ զնա և գովութեամբ կը պատկէ
նորա բարի բարի ձիրքերը : Չունիմ դիտաւո-
րութիւն հոս նորա ընտիր ընտիր հանգամանաց
արձագանդն լինել : անհատական ներքին սուրբ
զգացում մի կը թելադրէ զիս որդիական պարտք
մի կատարել : պարտք՝ որ նուիրական է և ան-
կեղծ, այս է շնորհակալ ըլլալ Նորին Հայրու-
թեան, իւր մօտերս տուած մի քանի ընտիր և
պատուական քարոզներուն համար, որ նշանա-
ւոր են, և որք յայտարար ապացոյցներ են իւր
արժանեաց և քրիստոնէական յօգոյն : Տեղ-
ւոյս ժողովուրդը բաւական ատենէ ի վեր ծա-
րաւի էին ընտիր քարոզներ լսելու : Երբ խորմ
եան մը կատեւաքանէր երբեմն և նորա ոգւոյն
հետեւող քանի մը բանիւրուն ուղեւոր քարոզիչը,
ժողովուրդը եռանդալիւ եկեղեցին խոնարհ
կ'ողեւորէր, կ'զմայլէր, կ'այալիւսակուէր, զին-
քը հոն տարբեր անձ կընկատէր, և հոն կ'կշռէր
թէ ընտիր քարոզ մը ինչ տպաւորութիւն կընէ
ոգւոյն վրայ, վսեմ խօսք մի ինչ ազդեցութիւն
ունի մարդկային սրտի վրայ, բարոյական իմաս-
տայից ասացուածներն ինչ տարբեր էակ մը կը
կազմեն զմարդս : և այս ամենափոքր բաղդա-
տութիւնը կրնայ մեզ յիշեցնել այն երկնային

խաղաղութեան պատգամները զԵսուս, այն
սքանչելի բարոյալիս վարդապետը, այն իմաս-
տասիրաց անզուգական պարագլուխը, որու
վարդապետած ատեն՝ երուսաղէմի հրապարակ-
ներն և տաճարները անձուկ դալով՝ հաղարաւոր
մարդիկ այն երկնային վարդապետին սուրբ
պատգամները, հոգեբուղիս խօսքերը լսելու հա-
մար՝ ծարաւի եղջերուաց նման ընդարձակ
դաշտերն և անապատները կ'ընթանային : հոն
կըխաւնէին ինչպէս կըլկայէ Ս. Աւետարանը :

Ահա գեղեցիկ և վսեմ խօսքերը այսպիսի
հրաշալիք կը բովանդակեն : վասնզի բարոյական
խօսքերը, բարոյական հանճարները, բարոյա-
կան իմաստասիրութիւնը գերազոյն էակին
շունչն են : նորա ազդումն և ներգործութիւնքն
են : յորս կըզմայլի մարդկութիւնը, և որովք
միմիայն կըկազմուի մարդկութիւնը՝ ճշմարիտ,
բարոյական և կատարեալ մարդկութիւն :

Հայ քարոզիչք, կուգէք ժողովրդեան համա-
կրութիւնը և սէրը գրաւել : կուգէք ձեր ժողո-
վուրդը բարոյական էակներ կազմել, կուգէք
առ Աստուած հաճոյական պաշտօն մատուցա-
նել, կուգէք ձեր անունը փառաւորել, կուգէք
անմահանալ երկրի և երկնից մէջ, և կուգէք
«Ահա ես և մանկունք իմ» ձայնը լսել ընել
տալ Աստուծոյ : նորա խաղաղութեան պատ-
գամները Յիսուսի հեղութիւնը, խոնարհու-
թիւնը, մարդասիրութիւնը և քաղցրութիւնը
ձեր անձանց մէջ պատկերացնելով՝ հոգեբուղիս
և իմաստալից խօսքեր արտասանեցէք բեմերու
վրայ, ձեր խօսքերն ձեր վարուց, բարոյ և
արարքներուն ալ թող համապատասխանեն, և
ահա այն ատեն պիտի փառաւորեն զձեզ մար-
դիկ երկրի վրայ և պիտի փառաւորէ առաւել
Աստուած երկնից մէջ : Ս. Չ.

Յարգոյ խմբագիր,

Հաճեցէք, կաղաչեմ, ներկայս հրատարակել
Ձեր պատուական լրագրին մէջ :

Հայերէն հին և արդի լեզուի նկատմամբ բա-
ւական ատենէ ի վեր յօդուածներ կը հրատա-
րակուին քանի մը բանասիրաց կողմէ : Յօդուա-
ծագիրք՝ եթէ առանց իրարու անձնականները
վիրաւորելու լոկ խնդիր իմաստասիրելով լու-
սաբանէին, ստուգիւ իրենց յօդուածները մեծ
գովութեամբ պիտի պատկուէին : բայց, ինչպէս
երբեմն գծադրաւոր կը պատահին, հետցեալէ
կիրք երեան գալով՝ վիճաբանութիւնը իր նը-
պատակէն հեռացած կընշմարի : Սոյն խնդիրը
գրեթէ 4—5 տարի յառաջ՝ առաջին անգամ
քաղաքիս մէջ յուղուած ըլլալով՝ այն ժամա-
նակները և մեք՝ իբրեւ դասատու հայերէն լեզ-
ուի և մեր պարտաւորութիւն ի խնդրոյ ունաց
ստիպուեցանք մեր դիտողութիւնները ազատա-
բար ընել ԱՐՇԱԼՈՒՍՈՅ մէջ, (թիւ 907) և այս
անգամ՝ թէ և շատերը խնդրեցին որ կրկին ի
հրատարակ հանենք մեր գաղափարներն, այլ
մենք աւելորդ սեպեցինք : նոյնի վրայ խօսիլ
սպասելով որ ուրիշներն ելնեն յասպարէզ : Ի
սկզբան ուրախացանք՝ երբ ոմանք սոյն պարտքը
ստանձնեցին : այլ յետոյ մեծապէս ցաւ եղաւ
մեզ, երբ վիճաբանք հեղեղական և կծու խօս-
քերով զիրար արհամարհեցան, ինչպէս գեո-
նոյնը կըտեսէ : Աշխարհաբաւեանց դէմ ջերմ
երկար մաքառող եղաւ մեծարոյ պարոն Նշան
Միրզա, որ իւր քանի մը յօդուածոց մէջ քա-
ղաքիս գլխաւոր Հայ դասատուները իւր գա-
ղափարաց համամիտ և համաձայն և լեզուի նը-
կատմամբ զանոնք իւր Ուսումնական խորհրդոյ
հետ հակաճառող կընշանակէ :

Քաղաքիս Ուսումնական խորհուրդը, կերել է
թէ Պ. Նշան Միրզայի դրածներուն շատ կէտերը
ճշմարտութենէ հեռի նկատելով՝ այս մասին
բացատրութիւն խնդրեց հայերէնի գլխաւոր
դասատուներէ, և կը հարցընէ թէ այնպիսի վի-
ճաբանութիւնք տեղի ունեցած են երբեք ի-
րենց և Ուսումնական խորհրդոյ մէջ : Ներկայ-
իւս կը ճանոցանեմ որ գրաւառ լեզուի ուսուց-
ման մասին Պ. Նշան Միրզայի գրած ինչ ինչ կէ-
տերուն շատերու հետ համամիտ եմ : Եթէ չեմ
սխալիր, ինչպէս քաղաքիս Ուսումնական խոր-
հուրդն ալ խալառ մերժած չէ, Կրթաւոր ու-
սումնարաններու, իսկ աշխարհաբաւը՝ Պատ-

բառապարհներու մէջ համառօտակի՝ անհրաժեշտ է ի դիւրութիւն ուսանողաց, և գրեթէ կերպով մը սոյնը կը հաստատէ նաև աշխարհիկ լեզուի քերականութեան հեղինակ արժաւ. Հայր Աթոռ Ս. Երանան ալ, երբ իր մէկ յառաջագանին մէջ կը յարէ որ աշխարհիկ լեզուն կատարելագործելու համար՝ հին լեզուի հետեւողութեան մեծ հարկ կը մնայ(1): Սակայն Պ. Միրզայի վարժարանաց ներքին անցից և դարձեալ անհրաժեշտ նկատմամբ գրածներուն՝ կը խոստովանի միայն իր լոկ այցելու գաստուն՝ անդիտակ եմ. իմ և Ուսումնական խորհրդոյ մէջ երբէք լեզուի համար վէճ տեղի ունեցած չէ. եթէ ուրիշ գաստուն մէջ եղած է, և է նա գիտակ այն ամեն դրուածներուն՝ թող նա պատասխանէ յանուն ճշմարտութեան:

Գրաբառի և աշխարհաբառի համար յուզուած խորհրդի պատասխանատու՝ Ուսումնական խորհուրդն է, Տեսուչ և դասատուք գործադիրք են անոր որոշմանց: Ուսումնական խորհուրդը արդէն հրատարակեց դպրոցական ուսմանց ծրագիրը. ազգին պարտականութիւնն է իբր գաստունը զայն նկատողութեան առնելով՝ ըստ այնմ բնութենէ կամ մերժել:

Եթէ Ուսումնական խորհուրդը իւր չհանէր իր ծրագիրը, այն ատեն ըստ պահանջման շատրու՝ հարկ էր գլխաւոր դասատուաց՝ Ուսումնական խորհրդոյն հայերէն լեզուի նկատմամբ ըրած մի քանի փոփոխութեանց վրայ իրենց լուրքն ու դիտողութիւններն ընել ի դիտութիւն ազգայնոց:

Թող ներեն վիճաբանք, եթէ իրենց խօսքեր կ'ընեն և հեղինական անուանեցի վերք: Իրօք այսպէս նշմարելինք. հարկ է որ երկու կողմն շարունակէ լոկ խնդիրը քննադատելով, և խոստովանելով զայն հաստատուն և ճշմարիտ պատերով, և տքնին իրենց հաճոյ երեցածին խոր յատկութիւններն, յերեւան հանել. ըստ անորք են վիճաբանութեան կարեւոր պայմանքն և պահանջմունքն: Ս. ՉԱՔՐԵԱՆ

Ահաւասիկ նորահաստատ Ազգօգուտ ընկերութեան կանոնադրութիւնքն, զորս մեր նախնւն թող խոստացեալ էաք հրատարակել:

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ

ԱԶԳՕԳՈՒՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. Ազգօգուտ ընկերութիւնն երկու նպատակ ունի. Ա. քաղաքիս մէջ՝ ազգային Օսմանականութեան և նորա հրահանգին գործադրութեան մէջ՝ եթէ օրինադանութիւն մի նշմարէ, զորքէլ առ որ անկ է: Բ. Զմիւռնոյ Հայ հասարակութեան օգտին՝ նիւթապէս և բարոյապէս պատուել ըստ կարի իւրում:

Բ. Ընկերութեան հիմնադիրք ամեն տարի իրենց և թէ բաժանորդաց մէջէն՝ եօթը անգամ քուէով գործադիր ժողով կը նորեն, և իրենց կը յանձնեն ընկերութեան նկատող գործը պաշտօնավարութիւնը:

Գ. Գործադիր ժողովոյ անդամք իրենց մէջէն անհատապէս, ատենադպիր և գանձապետ մը ընտրեն:

Դ. Որեւիցէ խնդիր մը գործադիր ժողովոյ անհատ մեծամասնութեամբ միայն կրնայ որոշել, և սոյն որոշումները արձանագրուելով՝ հրատարակել ըրոր գործադիր ժողովոյ անհատից, և ապա կը գործադրուին:

Ե. Ընկերութեան բաժնէքինն է շաբաթը 10 յայտ. հիմնադիրք և բաժանորդք իրենց առ բաժնիներուն գումարը պարտաւոր են:

Դրաբար հայերէնի՝ արդի լեզուին վրայ ունեցած ազդեցութիւնք. եւ մանաւանդ ասոր անկի կառու ու անոր կարօտութիւնք, անհրաժեշտ հարկ լինէր գրաբար միշտ ազգի տակ ունենալ: Այսինքն համառօտ յայտարարեմք՝ գրաբար հայերէնի վրայ եւ գլխաւորաբար աշխարհաբարի մէջ գործադրուած ձեւերուն իբր քե ուրուագիծ պատկերն ըլլալ՝ քեալ այն վախճանին համեմատ ծառայութիւն կը մատուցանել, սակայն չ'տնօրինէր գրաբար վերջական ու կարգաւորեալ ուսումը, մանաւանդ ընդհանրութեամբ: Որ նաեւ աշխարհաբարի կատարեալ անհատն անտարբիւն կը պահանջուի ունենալ:

Աշխարհաբար քերտ. Այտընեան Էրես 240

շաբթէ շաբաթ վճարել՝ և եթէ ուղեն՝ ազատ են եռամսեայն վեցամսեայն կամ տարեկանը կանխիկ վճարել գրամահաւաքներու, որոնք ալ գանձապետին յանձնել պարտաւոր են:

Զ. Հիմնադիրք՝ գործադիր ժողովոյ նկատելու այն ատեն կրնան ունենալ ընկերութեան համար միայն ներկայ գտնուելու իրաւունքը ունենալ, երբ ընդարձակ սրահ մը վարձելու կարողութիւնը ունենայ ընկերութիւնն:

Է. Հիմնադիր կամ բաժանորդք մը որեւէ կարեւոր խնդիր մը գրաւոր կերպիւ միայն կրնայ ներկայացնել գործադիր ժողովոյ, որուն պատասխանն ալ գրաւոր պիտի ընդունի ժողովէն:

Ը. Գործադիր ժողովը՝ պարտաւոր է վեց ամիսը անգամ մը և ի պահանջել հարկին ի ժողով հրաւիրել զհիմնադիր անդամն:

Թ. Ընկերութեան գրամագրութիւնը մինչև 10,000 զուրուշի հասնիլը՝ որ և իցէ մէկու մը նիւթական ձեռնարկութիւն չ'պիտի ըլլայ: 10,000 զուրուշի իբր մայր գրամագրութիւն պիտի նկատուի, և զայն որք և իցէ կերպիւ աճեցնելու համար հիմնադիրներու մեծամասնութեան որոշմամբ ժամանակին պիտի վճարուի. բայց ընկերութեան պիտանի ծախուց այսինքն ժողովատեղւոյ, կահկարասեաց և ուրիշ կարեւոր իրաց համար ընկերութեան հաւաքեալ գումարէն 0/0ին 20ը միայն պիտի յատկանայ:

Ժ. Ընկերութիւնն՝ Աստուած մի արասցէ, եթէ լուծուի, արկղին մէջ գտնուած պատրաստ դրամները, և իր ունեցած կահկարասիքը հիմնադիր անդամոց որոշմամբ գալոցին, հիւանդանոցին և կամ ուրիշ ազգօգուտ հաստատութեան մը պիտի նուիրուի:

ԺԱ. Գործադիր ժողովոյ անդամք՝ եթէ ընկերութեան նպատակէն շեղին, այն ատեն հիմնադիր անդամք իրաւունք ունին զանոնք ուղղութեան հրաւիրել. և եթէ յամառին իրենց ընթացից մէջ, լուծել զանոնք և անոնց տեղ ուրիշները ընտրել:

ԺԲ. Հիմնադիր անդամոց իրաւունքութիւնը անփոփոխ և տեւական է. իր ուժը ձայնից առաւելութեան մէջ կը կայանայ. նպատակը իրեն հիմ և արգարութիւնը իրեն պաշտպան պիտի ունենայ:

Զմիւռնիա, 21 փետրվար 1877

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՏՈՒՆ

Կեդրոնական Ուսումնական խորհրդոյ Օժանդակ խորհուրդն կը ծանուցանէ արդոյ հասարակութեան թէ Ազգային Գրքատան մը կազմութեան ձեռնարկած է, յորում պիտի պարունակին հայերէն լեզուաւ տպեալ կամ ազգին վերաբերեալ օտար լեզուաւ տպեալ գրեանք, կամ ձեռագիր. և թէ այս մասին եղած նուէրներն մեծաւ շնորհակալութեամբ պիտի ընդունուին յիշեալ գրքատան մէջ՝ նուիրատուին անուամբ պահելոյ պայմանաւ:

Սոյն Ազգային Գրքատան՝ Ուսումնական խորհրդոյ կողմէ արժաւ. տէր Յովհաննէս քահանայ Հիւնքեարպէյէնտեան վերատեսուչ կարգեալ ըլլալով, այս մասին որ և է խնդիր կամ նուէր պէտք է ուղղել առ Նորին Արժանապատուութիւնն ի Կ. Պոլիս:

(ԱՐԱԳԻՐ ԹԵՐԹԻՆ 355 ԹԻՒՆՔ քաղեալ.)

«ՍԻՒՎԻԶ»

«Հոս ալ... տակէ 60 տարի առաջ 50 տուն Հայ կայ եղեր. իսկ այսօր 17 տուն կը գտնուի, որոց մէկն ալ հայերէն չ'գիտեր: Այս քաղաքին կառավարութիւնն ևս Հայոց ձեռքէն է եղեր առաջուց, որոցմէ բոլորովն առնուած է այժմ: Գեղեցիկ եկեղեցի մը և վանատուն մ'ունին. ժողովուրդը ոչ այնքան հարուստ է. գրեթէ յատուկ քահանայ չ'ունին, այլ լաթին քահանայէ պատարագ կը տեսնեն: Այս տեղի Հայ ժողովուրդը տակաւին սոսկմամբ կը յիշէ այն կոտորածը՝ որ տեղի ունեցեր է 1694ին թաթարաց ձեռքը. որ ատեն Հայ ժողովուրդը լուսաւորչական է եղեր, երբ թաթարք սոյն քաղաքը կը պաշարեն և Ս. Սարգսի շաբաթ օրը յանկարծ եկեղեցւոյ վրայ կը յարձակին պատարագի ժամանակ, և բոլոր ժողովուրդը քահանայով միատեղ ընդամենը 148 հոգի թրէ կան:

ցընեն՝ այնպէս որ՝ մէկն ալ չ'ազատիր: Այժմ յիշեալ եկեղեցւոյ մէջ Քրիստոսի 1011 թուականին գրուած մագաղաթեայ Աւետարան մը կայ: Ժողովուրդը տգէտ է»:

ԱՐՇԱԼՈՅՍԻ յամաց հետէ Հայ բաժանորդ մի ունի ի Սերվիզ (Szerpiz), որ է արժաւ. տէր Սիմօն Ֆարաօնեան ժողովրդապետ քահանայն. հետեւաբար սխալ է գրուցելն թէ՝ «մէկն ալ հայերէն չ'գիտեր»... և թէ՝ «յատուկ քահանայ չ'ունին»:

«Վիէննա բնակող հայազգիք՝ նկատելով որ կրօնական արարողութենէ և հոգեւոր մխիթարութենէ զուրկ կը գտնուին մասնաւոր աղօթատեղի չ'ունենալով, այս անգամ խնդրադիր մը ուղղեր են ամենա. Ս. Պատրիարքին, որ խորհրդոյն Դրան միջոցաւ՝ ինչպէս Մանչէսթըրի նոյնպէս Վիէննայի մէջ Հայկական մատուռ մը հաստատելու համար հարկ եղած բարեխօսութիւնը ընէ, շինութեան ծախքը Վիէննայի ազգայնոց կողմանէ հոգացուելու պայմանաւ»:

ՀԱՅՐԵՆԻՔ

Եթէ ստոյգ է այս լուրն, գովութեան արժանի կը համարիմք Վիէննայի փոքրաթիւ Հայ բնակչաց ազգասիրական բարեպաշտ դիտաւորութիւնը, որ տարակոյս չ'ունիմք թէ յաջողութեամբ պիտի պրակուի եթէ միաբանութեամբ հաստատուն մնան իրենց այս Աստուածահաճոյ որոշմանը մէջ:

ՄԱՍԻՍ լրագրոյն՝ կարկաթայի թղթակիցն կը գրէ յիշեալ թերթին, թէ Գաբըբայի օսմաննաց կղզիներու մէջ պատահեալ նոր տեսակ ջրհեղեղին զոհ եղող հայազգեաց թիւն՝ ոչ թէ տասն է, ինչպէս սխալմամբ կը գրէ ԱՐՇԱԼՈՅՍ, այլ մի է, Պետրոս Մ. Գասպար անուամբ:

Ուրախ եմք յոյժ որ մեր դրածն սխալ է. բայց կը տարակուսիմք որ չ'ըլլայ թէ ծածկել ուղեն զճշմարտութիւնն՝ մեր թղթակիցն տուած տեղեկութիւնն՝ հակառակասէր ոգւով՝ սխալ հանելու նպատակաւ:

Պ. ՃԼՅՄ ՊՐԱՅՍԻ ԶԱՌԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

«Լոնարայէն Մարա 10/22 թուով գրուած նամակի մը մէջ հետեւեալ լուրը կը կարդանք:

«Անցեալ շաբթու՝ այսինքն ամսոյս 4—16ին Ռոյալ Ինսթիթիւշն ըստած սրահին մէջ Պ. Ճէյոն Պրայս Անգղիացին Հայաստանի վերայ գեղեցիկ ճառախօսութիւն մը ըրաւ. Ամբողջ սրահը լեցուն էր, և ամեն մարդ ուշի ուշով մտիկ կը նէին: Չարմանալի են այս Անգղիացիք. տեսնելի թէ ինչ մեծամեծ ընտանիքներ եկած էին և առանց բառ մը կորսնցնելու մտիկ կը նէին: Պ. Պրայս Հայաստանի աշխարհագրական դիրքն երկարօրէն բացատրելէ և խիստ մեծ կարեւորութիւն տալէ ետեւ, սկսաւ Հայոց բարքին վերայօք խօսիլ շատ գովեստով: «Տաճկաստանի Ասիոյ մէջ անմասն ժողովուրդ մը են, ըսաւ, այնչափ ուշիմ և գործունեայ են ու ինքզինքնին կը սիրեն իրենց հեղահամբոյր և հաւատարիմ ընթացքով՝ որ անկարելի է նոյնն զգալ Ասիական Ռուսաց, Պարսից, Թուրքաց և այլ ժողովրդոց վրայ»։ Վերջապէս Պ. Պրայսի ճառը շատ հրահանգիչ էր Անգղիացւոց համար»:

ՄԱՍԻՍ

Օսմանեան նորահաստատ երեսփոխանական ժողովոյն Հայ անդամոց թիւն առայժմ 10 է. իսկ Յոյն անդամոց թիւն՝ 16:

Ահաւասիկ Հայ երեսփոխանաց անուանքն. Մագաղաթեան Սեպուհէ Զֆէնտի և Ալլահվերտի Յովհաննէս Զֆէնտի, ի Կ. Պոլսոյ: Ռուբէն Զֆ. Եղազեան, յԱնգլիանուպոլսոյ. Յովակիմ Զֆէնտի, ի Պրուսայէ. Յակոբ Զֆ. Սեբաղայեան, ի Զմիւռնոյ. Մանուկ Զֆ. Ղարաճայեան, ի Հալէպէ. Դանիէլ Զֆէնտի Խարաճեան, և Համազասպ Զֆէնտի Պալլարեան, ի Կարնոյ. Յովսէփ Զֆէնտի, ի Տիարպէքլիքէ. Գրիգոր Զֆէնտի յԱտանայէ:

ԳՍԻԱԶԱՆԱԳԻՐ

Նախապատիւ և վերջապէս Եպիսկոպոսաց, որք Առաջնորդական պատուով նստեալ յաթոռ

Ամենափոքրիկն էր վաճառողը, հանդերձ հակիրճ ծանօթութեամբ դիպացն ժամանակաց և նշանաւոր գործող նոցին ընդ այլովք, սկսեալ յաւուրց անտի գաղթականութեան Հայոց մինչ ցաւուրս մեր:

Այնատասիրեալ գերաւ տեսնեն Յովհաննու Խաչկեան խաչակիր Աւագերիցու Հայոց և հրատարակեալ յամին 1876 յիւրում տպարանի 'ի Կալկաթա' վերատեսչութեամբ իւրով:

Յուլիան 136 երեսաց բաղկացեալ և պարզ դարձաւ լեզուաւ շարադրեալ պատմական աշխատասիրութիւն մի է. զոր հեղինակն բարեհաճեալ է, յատուկ ուղերձով միով, նուիրել արժանայարգ Մերթաթուն Մ. Մկրտում տիկնոջ, 'ի Կալկաթա բնակելոյ:

ՔԱՆԱՔԱՆ ԷՆԻՔԵՔ

Ձմիւռնիս, 2 Ապրիլ:

Քաղաքիս ապահովութիւնն, ամենագործարար, երթալով կրկնաթիւնայ և բնակիչք նորին՝ այր և կին, ոչ միայն գիշերն՝ այլև ցերեկն զուրս ելլելով կողոպտուելու վտանգի մէջ կրգտնուին 'ի չարագործաց: Յանցելում չարաթու հռչակաւոր յոյն չարագործ մի՝ Պարթիւտաքի անուն, Բրօքականտայի դպրոցին փողոցը հետզհետէ ութ պատուաւոր քաղաքացւոյ ոսկի ժամացոյցները յափշտակեց դանակն 'ի ձեռին և ընթացէր ատրճանակն 'ի գրպանն: Պատուաւոր կին մի ևս ուրիշ չարագործէ կողոպտուեցաւ և նորա լիրբ վարմունքին ենթակայ եղև: Աւելորդ կըհամարուէր մի առ մի յառաջ բերել աստ և ուրիշ զանազան յափշտակութիւններ և գողութիւններ, որք անպակաս են միշտ, բայց հարկ կըհամարուէր ծանուցանել զփախուստն 'ի հասարակաց բանտէն երկոյ նշանաւոր չարագործաց՝ Մալթեզաքի, Վուրլիթաքի և ձիւլիս անուանելոյ:

Ինչո՞ւ համար արդեօք ոստիկանութիւնն անկարող կըլինի դարմանել իրաց այս ցաւալի վիճակը և ապահովութիւնն հիմնաւոր կերպիւ հաստատել: Մեր երկու գլխաւոր պատճառ կրտսենեմք. նախ՝ ոստիկանութեան զինուորաց յոյժ սակաւաթիւ լինելն, և երկրորդ՝ նոցա ամսական վարձուց անբաւականութիւնն:

Ամենայն վստահութեամբ կրսեմք թէ՛ ոչ ոք 'ի ուրանայ մեր ոստիկանութեան տեսուչ մեծաւորն—Պէյլին պատուաւոր և անբիծ բնաւորութիւնը, անձնանուէր անխնայ ջանքը և յաջողակութիւնն իւր ծանր պաշտօնին մէջ. բայց մէկ հոգի և մէկ գլուխ ինչ կրնայ բնել միայնակ. անշուշտ կարօտ է բաւականապէս վարձատրեալ բազմաթիւ զինուորաց առ 'ի հաստատուն պահել զապահովութիւնն մեր քաղաքին, որոյ բնակչաց թիւն 200.000ի մօտ է: Բայց և այնպէս մեր ոստիկանութիւնն ոչ բաւական թուով զինուոր ունի և ոչ բաւական ամսական թոշակ որոշեալ է: Այն օրն՝ կրսեմք քաղաքիս ԵՆԱՐԱՐԱՆԷՆ Գաղղիարէն լրագիրն, յորում ոստիկանութեան զինուորք և ամեն աստիճանի պահապանք պիտի ընդունին բաւական և կանոնաւոր թոշակ, այն օրն գտնուած պիտի լինի դարմանն իրաց այս տխուր վիճակին:

—Ձմեռնախմբութիւնն Ս. Յարութեան Գրիստոսի այս տարի արժանաւոր փառաւորութիւն կատարեց քաղաքիս Հայոց Ս. Եկեղեցին. յորում մեր նորընտիր Առաջնորդ գերաւ տէր Մելքիսեդեկ Մուրատեանց ծայրագոյն վարդապետն՝ յառաջին աւուրն Ս. Ձատկի հանգիստաւոր պատարագ մատուց և մեծապէս մխիթարեց զբարեպաշտ ժողովուրդն իւր իմաստալից բարոյական քարոզովն և իւր հոգեւոր օրհնութեամբք. որոց մասնաւորապէս ենթակայ եղեն քաղաքիս ազգային երեսփոխանական ժողովն, քաղաքական ժողովն, Ուսումնական խորհուրդն, Աղքատասիրաց ընկերութիւնն, Վահանեան ընկերութիւնն և նորահաստատ Աղգօգուտ ընկերութիւնն:

Նորին Գերապատուութիւնն չորեքշաբթի օրն փոխադարձ այցելութեան գնաց Հրէից Խախա մագլուխ Ռարբիին, և Պարսից մեծաշուք հիւպատոսին, յորոց սիրալիր և մեծայարգ ընդունելութիւնամբ պատուասիրեցաւ:

Հինգշաբթի օրն Հեղինակաց մեծաշուք հիւպատոսն՝ հաճեցաւ գալ յաղագային Առաջնորդարան մեր 'յայցելութիւն մեր արժանընտիր հոգեւոր Հովուին. որ իւր սովորական աշխատեցաւ քաղաքապետութեամբն արժանաւոր յարգանքով քննալաւ զներկայացուցիչն հեղինական տէրութեան՝ գաղղիարէն խօսակցելով ընդհնամ, որով մեր քաղաքիս պատիւն՝ ոչ սակաւ աւելցոյց:

Այս առթիւ հարկ կըհամարուէր ծանուցանել թէ գերաւ տէր Մելքիսեդեկ ծայրագոյն վարդապետն գաղղիարէն, գերմաներէն և ռուսերէն լեզուաց հմուտ և գիտուն եկեղեցական մի լինելով, որ գործարար հաղուագիւտ է Հայոց մէջ, շուտով մեծ համարումն ստացաւ օտար ազգաց հոգեւոր Հովուաց և գիտնականաց առջև: Արդէն երկու անգամ է, որ քաղաքիս Երմիսիս (կրթարան) անուանեալ յոյն դպրոցին փոխտնօրէնութեան դաստուռն՝ որ 'ի Գերմանիա կատարել է իւր ուսմանց ընթացքը, իւր ընկերովն այցելութեան կողմայ մեր Առաջնորդին:

Այսօր ևս Ձմեռնոյ վիճակին լատին Առաջնորդ մօնսէնիօր Սքարբարիէդու արքեպիսկոպոսն, որ քաղաքահայտ և գիտնական եկեղեցական մի է, այցելութեան կերթայ մեր գերապատիւ հոգեւոր Հովուին:

—Յունաց Ս. Ձատկի տօնախմբութիւնքն՝ 'ի պատճառս հրացան և ատրճանակ արձակելու վատթար սովորութեան, ինչպէս ամեն տարի՝ այս տարի ևս ձախորդ հետեւութիւններ ունեցան. այսինքն երկու հոգի ծանրապէս վիրաւորուելով մեռան և մի քանի անձինք թեթեւ կերպիւ վիրաւորուեցան:

—Ոստիկանութիւնն հինգշաբթի օրն յաջողեցաւ ձեռք անցնել զհռչակաւոր չարագործն Պարթիւտաքի կողուած՝ հանդերձ իւր մէկ ընկերովն Քոնտովիսալի անուն: Մեր ոստիկանութեան տեսուչ մեծաշուք Եսային—Պէյլին իմանալով որ յիշեալ չարագործք Բունթայի թաղն տան մը մէջ կրգտնուին, փութացաւ անձամբ այն թաղն երթալ հանդերձ ձեռնոր և հետեւակ բաւական զինուորք, և պաշարելով զնոյն տունն՝ յաջողեցաւ բռնել զանոնք և 'ի բանտ տանիլ: Պարթիւտաքի և Քոնտովիսալի աւագաւորապետաց Բունթայէն 'ի բանտ տարուին՝ զարմանալի տեսարան մի կըներկայացնէր. քանզի բայ 'ի բազմաթիւ պահապան զօրաց, խուռն բաղմութիւն քաղաքացւոյ՝ նոցա ետեւէն կերթային և պատուհանները լեցուն էին հետաքրքիր մարդիկներով, որք տեսնել կողզէին այս հռչակաւոր չարագործաց դէմքը:

—Ձէնք, և մասնաւորապէս ատրճանակ կրելու սովորութիւնն անշուշտ ևս առաւել վտանգաւոր է երբ վրան զէնք կրողն՝ արեքցութեան վիճակի մէջ կրգտնուի: Երեքշաբթի օրն բրօքիթի իլիա կոչուած թաղն այսպիսի կացութեան մէջ գտնուելով յոյն այր մի՝ ատրճանակը իւր կնոջ վերայ պարպեց և վիրաւորեց զնա: Յետոյ ինքզինքն գալով և յուսահատելով, անձնասպան պիտի լինէր եթէ քովը եղողը չարգիւլէին:

—Չորաշաբթի հանդէսն՝ որ լի էր խուռն բաղմութեամբ, ըստ ամեն տարուան սովորութեան կատարեցաւ երեքշաբթի օրն բարեկարգութեամբ և առանց ցաւալի դիպաց: Մեծ յաղթանակ տանողքն՝ Մ. Տրաքօօլի, Տալլա և Միրզան պարոնաց ձիերն էին:

—Քաղաքիս Պարսից հիւպատոս մեծաշուք Շէյխ Մէհմէտ—Պէյլին, որ գաղղիարէտ և բանիւրուն պաշտօնակալ մըն է, արժան համարեցաւ իւր տէրութեան հիւպատոսարանին բժիշկ անուանել զմեծաւոր Զայեան բժիշկին:

—Սպանիոյ վեհապալա թագաւորին հրամանագրովն, նոյն տէրութեան Ձմեռնոյ փոխհիւպատոսարանին հիւպատոսարանի աստիճան տրուեցաւ և մեծաշուք մօսիւ Ռ. Պէյնար ասպետն՝ հիւպատոս անուանեցաւ, որ արդէն իւրեւ փոխհիւպատոս մի քանի տարի արժանապէս պաշտօն վարելով, քաղաքիս հասարակաց յարգն և համարումն ստացած է:

—Կըհաւաստեն թէ Վանայ վսեմ կուսակալին մարդասիրական խնամքն նոր ոստիկանութիւն մի հաստատուելով նոյն քաղաքին մէջ բոլորովին 'ի Հայոց բաղկացեալ, բարեկարգութիւնն և ապահովութիւնն խիստ բարձր վիճակի մէջ է:

—Աղգաւ յոյն Գասապ Էֆէնտին՝ որ խմբագրապետ և արտօնատէրն է ԻՍՏԱՒՊԱՆ քաղաքական լրագրոյն, որպէս և ՄՈՍՈՍ և ԽԵՅԱՆ զաւելտական թերթից՝ հրատարակելոց 'ի Պոլս, եռամեայ բանտարկութեան դատաւարտեցաւ վճարգրով Ատեանին, որոյ առջև 'ի դատ կուլեցեալ էր վան լրագրական յանցանաց:

—Կ. Պօլսոյ թուրքերէն ՎԱԲԸԹ լրագրոյն զրուցածին նայելով՝ Սպարապետի պաշտօնատունն օսմանեան զօրաբանակին ուտելեաց համար միայն ամիսն 700.000 լիւա ծախք կընէ, որ լիւան 100 զուրուշէն 70 միլիոն ուլ զուրուշ կընէ. հետեւաբար օրը 2 1/3 միլիոն զուրուշ անէ՝ միայն ուտելեաց համար եղած ծախքը:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Բամպակին գնոցնոր փոփոխութիւն մի չեր, այլ շարունակ կըվաճաւ 345—348 զուրուշով առ կենդինարն՝ մեքենայով մաքրուածք, և 320—325 Ատանայի բամպակը:

Աֆիօնէն նոր վաճառում մի չեր ևս մեր վերջին թիւէն 'ի վեր. հետեւաբար 'ի մեծի հանգարտութեան գտանի և հակամէտ է իջման:

Փայամուտին նաթիւրէլ կոչուած տեսակը վաճառեցաւ 153—169 զուրուշի կենդինարն ապրանքին որակութեանը համեմատ:

Ճէհրին, ոչխարի բուրդն և քէօքայոյան յանգործութեան գտանին:

ԾԱՆՈԹՅՈՒՆ

Աղքատասիրաց ընկերութեան գեղարանն առաջին տեսակ գեղեր կրգտնուին, զորս ընկերութիւնն ուղղակի Եւրոպայէն բերել կուտայ. ուստի կըյորդորեմք զբարեսեր հասարակութիւնն, որ 'ի պահանջել հարկին նոյն գեղարանին դիմեն, որոյ՝ արդիւնքն՝ ինչպէս յայտնի է, 'ի նպաստ աղքատաց սահմանեալ են:

Պ. ՏԸ ԳԼՄՈՐ

Պատուական վիպասանութիւն մըն է, որ 'նպատակ ունի զգնչումն ընկերակաւ մոլութեանց եւ զբարոյական բարոքումն մարդոց:

Այս գործն մեր ժամանակակից գաղղիացի Օգրալ Ֆեօյէ Երեւելի մատենագրին ընտրելագոյն աշխատութեանց մի է. զոր քարգմանեալ է 'ի հայերէն աշխարհիկ բարբառ՝ մեր քաղաքակից յարգոյ պարոն Գրի. Չիլիկիլիեան գրագետն:

Առաջիկայ բարգմանութիւնն բաղկացեալ է յերկուց հատորոց, յորոց առաջինն 'ի յոյս ընծայեցաւ անցեալ ամին վերջերք: Իսկ երկրորդ հատորն՝ որ բաղկացեալ է յութաւալ 156 երեսաց, հրատարակեցաւ 'ի մօտ առաւել 'ի Տեփեկեան տպարանի քաղաքիս:

Իւրաքանչիւր հատորոյն գինն 1 1/2 ժրանք է:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթ անգամ մը՝ շաբաթ օրը կըհրատարակուի: Տարեկան գինը 420 զուրուշ է ող կըբաժնուի, կանխիկ վճարելի: Գլուս երթալու լրագրաց ճանապարհի ծախքը՝ առնողին վերայ է: Ո՛վ որ կուզէ, կրնայ բաժնաւորը գրուիլ Ձմեռնիս՝ Արշալուստի դաստուռը. իսկ ուրիշ քաղաքացի համար, ահա կընշանակի լրագրոյս մեծարդոյ գործակալաց անուանքը, որք են:

Կոստանդնուպոլիս՝ Հ. Ս. Առաճան և Էֆէնտի, Տեփեկե և Տէր Փոռնի լրագրոյն:

Աղքատասիրատ աղա Մկրտիչ Հալպեկեան:

Գահիրէ՝ Խօկէնտէր աղա Մելքեան:

Յոպպէ՝ աղա Սիմօն Ս. Մուրատեան, փոխհիւպատոս Գերմանիոյ:

Բէզէրպարիկ՝ Խաչատուր սարկաւազ Խանթարեան:

Մոսկուա՝ պարոն Չարմայր Մսերեան:

Հալպէ՝ Տ. Խոսէակ քահանայ Դանիէլիէան:

Պաղատա՝ Անգղոյ հիւպատոս փոխանորդ, աղա Մկրտիչ մահման Ս. Խ. Յովակիմեան:

Կալիթա՝ պարոն Ս. Խ. Յովակիմեան:

Մատրոս՝ պարոն Ս. Նորիկա Սամ:

Պաղատա՝ պարոն Մանուկ Որդանեան:

Խմբագիր—տէր լրագրոյս,

Գլխաւոր Պ. Պաղատա: